Ծանոթություն.— *Առաջին տողում* ամիրսպասալար *և* մխարգրձել *բառերը տիտղոսներ են և ոչ թե անձնանուն, բայց ժամանակին դրանք գործ են ածվել անձնանվան հետ միասին և նույնիսկ անձնանվան փոխարեն, առանց իսկական անունի, ինչպես այս արձանագրության մեջ, հավատացած լինելով, որ միայն տիտղոսներով էլ նրանք ճանաչելի են բոլորին։*

2. Ամիրսպասալար Մխարգրձելի (որ վրացերեն նշանակում է երկայնաբազուկ) *հայրը՝ Շահնշահը ևս իր իսկական անունով հանդես չի գալիս, թեև նա Զաքարե ամիրսպասալարի որդին էր և Սարգիս էր կոչվում իր պապի անունով, բայց սովորաբար արձանագրությունների մեջ միայն Շահնշահ է կոչվել։*

3. Զիս սաբրղանմիշ արար *բառերի վերծանությունը պայմանական է և անհասկանալի, իսկ* արար *բառը գրեթե անտեսանելի։*

4. Չորրորդ տողի վերջավորության մոտ եւ մեր պապերէ զմեծ *բառերը լավ չեն կարդացվում քարի ծայրերը փշրված և գրերն աղավաղված լինելու պատճառով։*

5. Սխալ կարող է լինել նաև 7-րդ տողում վանեցու *(վանիցս) բառերից հետո գրված* ճայր *(գուցէ հէր) բառը, որի գրերը լավ չեն երևում քարը մաշված լինելու պատճառով։*

6. Նույն տողի ով էք ձեր *անեծքի արտահայտության մեջ* ով որ-ի *փոխարեն հանդիպում է նաև այլ արձանագրությունների մեջ։*

7. Յոթերորդ և ութերորդ տողերի որոշե(ա)լ լիցի, անիծե(ա)լ լիցի եղե(ա)լ ուխտս *դարձվածքների մեջ* ա *գիրը չենք ավելացրել կարծելով, որ այդ բառերն առանց* ա-ի *են գործածվել բարբառում և միջին հայերենում, մանավանդ որ անցյալ դերբայի* եալ *վերջավորության փոխարեն միայն* ել-ը *հանդիպում է նաև այլ վայրերի արձանագրությունների մեջ։*

8. 11-րդ տողի ենաւք (ենօք)-ը *արձանագրության փորագրիչը, կամ ինչպես կոչում էին հնում,* գծողն *է, բայց թե ինչ բառ կարող է լինել* Պ. . . ենա-ը, *դժվարանում ենք որոշել։*

Տարբերություն.— *1. Առաջին տողում* զիս սաբրղանմիշ արար եւ Ջալ *կարդացել է՝* զերկիրն աւերեալ էր Ղամիր շարար:

2. Երկրորդ տողի էկի վանքս ու զտեղս անմարդ զտաք Ջալ *կարդացել է՝* եկի ի վանքս զտողսան մարդ զդուանք:

3. Նույն տողի փակած *բառը* Ջալ *կարդացել է՝* աւերած:

4. Չորրորդ տողի եւ թագաւորազն ամուսին իմ Վանենի Ջալ *կարդացել է՝* եւ այլ ազգականք եւ ամուսինն իմ Վանանէ:

5. Նույն տողում ուխտ դրաք *կարդացել է՝* ուխտ տուաք:

6. 4-րդ տողի վերջի և 5-րդի սկզբի եւ մեր պապերէ զմեծ արձանս փորեցաք Ջալ *գրել է՝* եւ մեր պարոն Աւագին և ամուսնին Ասփային և ամենայն:

7. 5-րդ տողի վերջի և 6-ի սկզբի այլ հարկանան Սանահինս չմտանէ Ջալ *կարդացել է՝* այլ Հարկ Սանահնէս կտան:

8. Վեցերորդ տողի եւ այս բանիս կարացաք զմիաբ(ան)քս յետ ժողովել Ջալ *վերծանել է՝* եւ այս բանիս կարգեցինք զմիաբանքս յետոյ ժողովեալ...:

9. Յոթերորդ տողի դաւանութենեն *կարդացել է՝* արքայութենեն:

10. 10-րդ տողի վերջին յանուն մեր *բառերը* Ջալ *թվական կարծելով կարդացել է* թվին ՉԽԹ, *բայց արձանագրության վերջում թվական չկա։*